ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0078 Երևան, Հալաբյան 41ա
Հեռ. /060/ 713-413

ԼԻԱԶՈՐԱԳԻՐ

ութը նոյեմբերի, երկու հազար քսաներկու թվական

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության գլխավոր քարտուղարի պաշտոնակատարը «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի ուժով լիազորում է Արմավիր-Բաղրամյան տարածաշրջանի բաժանմունքի պետ, արդարադատության գնդապետ Դավիթ Պողոսյանին (ծառայողական վկայական՝ թիվ 04/95) Հարկադիր կատարումն ապահովող ծառայության անունից հանդես գալու «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲ ընկերությունում և դրա մասնաճյուղերում՝ պայմանագիր կնքելու և դրա հետ կապված անհրաժեշտ բոլոր գործողությունները կատարելու համար:

Լիազորագիրը տրվում է մեկ ամիս ժամկետով:

ԱՇՈՏ ԱՎԱԳՅԱՆ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 0546520

Միացման պատվեր N 84425111

ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՄԱՆ, ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԲԱՇԽՄԱՆ ԵՎ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Կիրովական Ք3-ց
(կնքման վայրը)

10 / 11 / 2022 թվական

Բաշխողը (Երաշխավորված մատակարարը)՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԲԸ, ի դեմս Գլխավոր տնօրեն՝ ԿԱՐԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ, ում անունից .....թ. թիվ ..... Լիազորագրի հիման վրա հանդես է գալիս ՄԱՄՆԱՃՅՈՒՂԻ ՏՆՕՐԵՆ ՌՈԲԵՐՏ ԼԵՎՈՆՅԱՆԸ մի կողմից, և Սպառողը՝ <<ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ>> ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆԸ, մյուս կողմից, համատեղ կոչվելով կողմեր, ղեկավարվելով «Էներգետիկայի մասին» օրենքով, այլ օրենքներով, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) հաստատած՝ Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական մանրածախ շուկայի առևտրային կանոններով (այսուհետ՝ ԷՄԱ կանոններ), ինչպես նաև էլեկտրաէներգետիկական բաշխման ցանցային կանոններով (այսուհետ՝ ԷԲՑ կանոններ) և այլ իրավական ակտերով, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն պայմանագրի համաձայն Բաշխողը միացնում է Սպառողի ՀՀ ԱՐՄԱՎԻՐ , ք.ԱՐՄԱՎԻՐ, ՄՅԱՍՆԻԿՅԱՆ փող. 15ա/1 հասցեում գտնվող նոր կառուցվող կամ վերակառուցվող Ոչ Կենցաղային նշանակությամբ սպառման համակարգը (այսուհետ՝ սպառման համակարգ) էլեկտրական ցանցին (այսուհետ՝ էլեկտրական ցանցին միացում) և Սպառողին մատուցում է Մատակարարից գնված էլեկտրական էներգիայի բաշխման ծառայություն կամ իրականացում է էլեկտրական էներգիայի երաշխավորված մատակարարում, իսկ Սպառողը վճարում է իր սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացման (բացառությամբ ԷԲՑ կանոններով նախատեսված դեպքերի), իրեն մատուցված բաշխման ծառայության, ինչպես նաև երաշխավորված մատակարարման դիմաց:

2. ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

2. Սպառողի սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման վճարը (այսուհետ՝ միացման

վճար), կազմում է 503000.00 դրամ, ներառյալ ԱԱՀ՝ համաձայն սույն պայմանագրի N 1 հավելվածի:

3. Սպառողը Միացման վճարի 50 տոկոսը (այսուհետ՝ կանխավճար) սույն պայմանագրի կնքման պահից 24 ամսվա ընթացքում փոխանցում է Բաշխողի՝ սույն պայմանագրի վավերապայմաններում նշված միացման վճարի համար նախատեսված բանկային հաշվին

4. Բաշխողը էլեկտրական ցանցին միացումն ապահովում է կանխավճարի վճարմանը, իսկ ԷԲՑ կանոններով նախատեսված դեպքերում՝ պայմանագրի կնքմանը հաջորդող 55 օրացույցային օրվա ընթացքում, իսկ ԷԲՑ կանոններով սահմանված 0,22 կՎ կամ 0,4կՎ լարմամբ պարզեցված միացման դեպքում՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում (նշված ժամկետները չեն կարող գերազանցել ԷԲՑ կանոններով սահմանված ժամկետները):

5. ԷԲՑ կանոններով սահմանված բարդ ընթացակարգով էլեկտրական ցանցին միացման դեպքում միացումը կատարվում է համաձայն սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված տեխնիկական պայմանների և (կամ) N 3 հավելվածով սահմանված էլեկտրամատակարարման միագիծ սխեմայի:

6. Միացման վճարի ընդհանուր գումարի և կատարված կանխավճարի տարբերությունը Սպառողը վճարում է Բաշխողին էլեկտրական ցանցին միացման համար վերջինիս դուրս գրած հաշվարկային փաստաթղթի հիման վրա՝ էլեկտրական ցանցին միացմանը հաջորդող ամսում՝ սպառվող էլեկտրաէներգիայի դիմաց վճարման համար ԷՄԱ կանոններով սահմանված ժամկետում:

7. Սպառողի կողմից սույն պայմանագրի 6-րդ կետով նախատեսված վճարման պարտավորության չկատարման դեպքում վերջինիս էլեկտրամատակարարումը կարող է դադարեցվել ԷԲՑ կանոններով սահմանված կարգով:

3. ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՄԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԿՈՂՄԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

8. Բաշխողը պարտավոր է՝

1) սույն պայմանագրի 4-րդ և 5-րդ կետերի համաձայն ապահովել Սպառողի սպառման համակարգի միացումն էլեկտրական ցանցին.

2) սույն պայմանագրի 10-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն Սպառողի կողմից էլեկտրական էներգիայի ընդունումը չապահովելու դեպքում իրականացնել սպառման համակարգի միացումն էլեկտրական ցանցին՝ Սպառողի կողմից էլեկտրական էներգիայի ընդունումն ապահովելու վերաբերյալ տեղեկացվելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում.

3) սույն պայմանագրի 11-րդ կետի 1-ին ենթակետով և ԷԲՑ կանոններով նախատեսված դեպքերում և կարգով կանխավճարը վերադարձնել Սպառողին՝ վերջինիս նախընտրած (կանխիկ կամ անկանխիկ) ձևով.

4) էլեկտրական ցանցին միացման ժամկետների փոփոխության դեպքում, այդ մասին իրեն հայտնի դառնալու պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում, պատշաճ ձևով տեղեկացնել

Սպառողին.

5) Սպառողին վճարել տույժ սույն պայմանագրում սահմանված ժամկետների խախտման դեպքում՝ համաձայն սույն պայմանագրի 31-րդ կետի:

9. Բաշխողն իրավունք ունի՝

1) Սպառողից պահանջել սույն պայմանագրի 6-րդ կետով սահմանված ժամկետում վճարել միացման վճարի և կանխավճարի տարբերությունը.

2) Սպառողի կողմից սույն պայմանագրի 6-րդ կետով սահմանված պարտավորությունը խախտելու դեպքում ԷԲՑ կանոններով սահմանված կարգով դադարեցնել Սպառողին երաշխավորված էլեկտրամատակարարումը և (կամ) հաշվարկել տույժ՝ սույն պայմանագրի 32-րդ կետի և ԷԲՑ կանոնների համաձայն:

10. Սպառողը պարտավոր է՝

1) վճարել կանխավճարը, ինչպես նաև միացման վճարի և կանխավճարի տարբերությունը՝ սույն պայմանագրի 6-րդ կետի համաձայն, բացառությամբ ԷԲՑ կանոններով սահմանված դեպքերի.

2) սույն պայմանագրի 4-րդ կետով նախատեսված ժամկետում ապահովել էլեկտրական էներգիայի ընդունումը, իսկ նշված պարտավորության խախտման դեպքում՝ Բաշխողին տեղեկացնել էլեկտրական էներգիան ընդունելուն պատրաստ լինելու մասին:

11. Սպառողն իրավունք ունի՝

1) գրավոր պահանջել Բաշխողից վերադարձնել կանխավճարը՝ վճարման պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում: Նշված ժամկետի ավարտից հետո կանխավճարը վերադարձման ենթակա է միայն սույն պայմանագրի համաձայն Սպառողի սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման աշխատանքների կատարմանն ուղղված Բաշխողի կրած փաստացի ծախսերի հատուցման պայմանով՝ պահանջի պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2) սույն պայմանագրով սահմանված ժամկետների խախտման դեպքում Բաշխողից պահանջել վճարելու տույժ՝ սույն պայմանագրի 31-րդ կետով սահմանված կարգով:

4. ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԲԱՇԽՄԱՆ ԵՎ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԿՈՂՄԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

12. Սույն պայմանագրի համաձայն կողմերն ունեն այն բոլոր իրավունքները և պարտականությունները, որոնք նախատեսված են ԷՄԱ կանոններով և ԷԲՑ կանոններով:

5. ԲԱՇԽՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՏԱԿԱՐԱՐՎԱԾ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԳԻՆԸ, ՔԱՆԱԿԻ ԵՎ ԱՐԺԵՔԻ ՀԱՇՎԱՐԿԸ, ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

13. Հաշվարկային ամսվա ընթացքում սպառված էլեկտրական էներգիայի քանակությունը որոշվում

է ԷՄԱ կանոններով սահմանված կարգով:

14. Հաշվարկային ամսվա ընթացքում Սպառողին մատակարարված էլեկտրական էներգիայի արժեքը, բացառությամբ սույն պայմանագրի 15-րդ կետով նախատեսված դեպքերի, որոշվում է տվյալ լարման մակարդակի և ժամային տիրույթների համար (եթե Առևտրային հաշվառքի սարքն ունի նման տարանջատված հաշվառման հնարավորություն) Հանձնաժողովի կողմից սահմանված սակագների և մատակարարված էլեկտրական էներգիայի քանակի արտադրյալով, իսկ Մատակարարի Սպառողի դեպքում՝ էլեկտրական էներգիայի բաշխման ծառայության արժեքը որոշվում է տվյալ լարման մակարդակի համար Հանձնաժողովի կողմից սահմանված բաշխման ծառայության մատուցման սակագնի և բաշխված էլեկտրական էներգիայի քանակի արտադրյալով:

15. Երաշխավորված մատակարարի կողմից ԷՄԱ կանոններով սահմանված դեպքերում Սպառողի էլեկտրական էներգիայի մատակարարումը վերսկսելու, ինչպես նաև Սպառողի կողմից ԷՄԱ կանոններով և Հանձնաժողովի հաստատած Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի առևտրային կանոններով սահմանված ժամկետում և կարգով Որակավորված սպառողի կարգավիճակ չստանալու կամ Մատակարար չընտրելու դեպքում Հաշվարկային ամսվա ընթացքում Երաշխավորված մատակարարի կողմից Սպառողին մատակարարված էլեկտրական էներգիայի արժեքը հաշվարկվում է այդ սպառողական խմբի համար Հանձնաժողովի կողմից սահմանված սակագնի և մատակարարված էլեկտրական էներգիայի քանակի արտադրյալով:

16. Հանձնաժողովի կողմից էլեկտրական էներգիայի սակագնի փոփոխման դեպքում նոր սակագինն ուժի մեջ է մտնում Հանձնաժողովի սահմանած ժամկետից:

17. Սպառողը նախորդ ամսվա ընթացքում մատակարարված էլեկտրական էներգիայի, իսկ Մատակարարի Սպառողի դեպքում՝ բաշխման ծառայության արժեքը Բաշխողի՝ Պայմանագրի վավերապայմաններում նշված բանկային հաշվին վճարում է համաձայն ԷՄԱ կանոնների՝ Բաշխողի կողմից (անձամբ կամ լիազորված անձի միջոցով) ԷՄԱ կանոններով սահմանած կարգով և ժամկետում հաշվարկային փաստաթուղթ ներկայացվելու դեպքում:

18. Հաշվարկային փաստաթղթում սխալ հայտնաբերելու դեպքում սխալը հայտնաբերած կողմը փաստի մասին տեղեկացնում է մյուս կողմին: Անհամաձայնության դեպքում կողմը ԷՄԱ կանոններով սահմանված ժամկետում մյուս կողմին գրավոր ներկայացնում է իր պարզաբանումները՝ համապատասխան հիմնավորումներով: Հաշվարկային փաստաթղթում սխալի փաստը հաստատվելու դեպքում Բաշխողն ուղղումը հաշվի է առնում հաջորդ ամսվա համար ներկայացվող հաշվարկային փաստաթղթում:

19. ԷՄԱ կանոնների համաձայն տույժ հաշվարկելու դեպքում Բաշխողը Սպառողի վճարումներից առաջնահերթ մարում է մատակարարված էլեկտրական էներգիայի, իսկ Մատակարարի Սպառողի դեպքում՝ մատուցված բաշխման ծառայության արժեքը՝ ըստ դրա վճարման համար սահմանված

ժամկետի վաղեմության, հետո միայն հաշվարկված տույժի գծով պարտավորությունները:

20. Պարտքի առկայության դեպքում Բաշխողը չպետք է դադարեցնի Սպառողի էլեկտրամատակարարումը, եթե Սպառողը ներկայացրել է Բաշխողի համար ընդունելի վճարման երաշխիքներ կամ նրա հետ կազմվել է պարտքի մարման ժամանակացույց: Սույն կետը չի սահմանափակում Բաշխողի իրավունքը պարտքի մարման ժամանակացույցի խախտման դեպքում դադարեցնելու Սպառողի էլեկտրամատակարարումը՝ ապահովելով ԷՄԱ կանոններով և ԷԲՑ կանոններով սահմանված՝ տվյալ Սպառողի էլեկտրամատակարարման դադարեցման ընթացակարգերը:

21. Բաշխողի (Երաշխավորված մատակարարի) հանդեպ դրամական պարտավորությունների բացակայության դեպքում Սպառողի վճարումները որպես կանխավճար ուղղվում են ապագայում առաջացող պարտավորությունների կատարմանը, եթե Սպառողը այդ գումարի վերադարձի պահանջ չի ներկայացրել:

6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ

22. Սույն պայմանագրով սահմանված՝ էլեկտրական ցանցին միացմանը վերաբերող դրույթներն ուժի մեջ են մտնում սույն պայմանագրի ստորագրման պահից և գործում են մինչև սույն պայմանագրի 1-ին կետով ամրագրված սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացմանը վերաբերող Կողմերի պարտավորությունների ամբողջական կատարումը:

23. Սույն պայմանագրով սահմանված՝ էլեկտրական էներգիայի բաշխմանը և (կամ) երաշխավորված մատակարարմանը վերաբերող դրույթներն ուժի մեջ են մտնում էլեկտրական ցանցին Սպառողի առաջին փաստացի միացման պահից, իսկ վերակառուցվող սպառման համակարգի դեպքում՝ սույն պայմանագրի ստորագրման պահից և գործում են _____ ժամկետով:

24.Սույն պայմանագիրը կնքվում է անորոշ ժամկետով, բացառությամբ՝ ԷՄԱ կանոններով սահմանված դեպքերի: Եթե ԷՄԱ կանոններով տվյալ դեպքի համար նախատեսված է ժամանակավոր պայմանագրի կնքում, ապա դրա գործողության ժամկետը լրանալուց մեկ ամիս առաջ կողմերից յուրաքանչյուրը կարող է ծանուցել մյուս կողմին պայմանագրի գործողության դադարեցման մասին: Եթե ժամկետի ավարտից հետո Սպառողը Բաշխողի ծանուցման բացակայությամբ շարունակում է սպառել էլեկտրական էներգիա, ապա պայմանագրի գործողությունը համարվում է երկարաձգված՝ նույն պայմաններով և նույն ժամկետով՝ բացառությամբ ԷՄԱ կանոններով նախատեսված դեպքերի:

25. Հանձնաժողովի կողմից սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման և էլեկտրական էներգիայի բաշխման ծառայության մատուցման և էլեկտրական էներգիայի երաշխավորված մատակարարման պայմանագրի նոր օրինակելի ձև հաստատվելու կամ դրանում փոփոխություններ, լրացումներ կատարվելու դեպքում Հանձնաժողովի համապատասխան իրավական ակտն ուժի մեջ

մտնելու պահից կնքված պայմանագրերը համարվում են նոր կամ փոփոխված ձևին համապատասխան կնքված, կամ փոփոխված:

26. Էլեկտրական էներգիայի երաշխավորված մատակարարումը կարող է դադարեցվել Սպառողի դիմումի համաձայն՝ ԷՄԱ սահմանված կարգով:

27. Սույն պայմանագիրը լուծվում է՝

1) կողմերի փոխադարձ համաձայնությամբ,

2) Սպառողի կողմից միակողմանի՝ այդ մասին Բաշխողին տեղեկացնելու, ինչպես նաև մատակարարված էլեկտրական էներգիայի դիմաց ամբողջությամբ վճարելու պայմանով, իսկ Մատակարարի Սպառողի դեպքում՝ մատուցված բաշխման ծառայության դիմաց ամբողջությամբ վճարելու պայմանով,

3) Բաշխողի կողմից միակողմանի՝

ա. Սպառողի կողմից կանխավճարը սույն պայմանագրի 3-րդ կետով սահմանված ժամկետում չվճարելու, սույն պայմանագրի 11-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն այն հետ պահանջելու, կամ սույն պայմանագրով, օրենքներով, ԷՄԱ կանոններով և ԷԲՑ կանոններով սահմանված այլ դեպքերում՝ այդ մասին Սպառողին նախապես տեղեկացնելու պայմանով,

բ. ԷՄԱ կանոնների համաձայն որոշակի ժամկետով կնքված պայմանագրի գործողության ժամկետի ավարտվելու դեպքում՝ այդ մասին ժամկետը ավարտվելուց մեկ ամիս առաջ Սպառողին ծանուցելու պայմանով,

գ. սպառման համակարգի տեղակայման տարածքի (շենքի, շինության) նկատմամբ իրավունք ունեցող անձի գրավոր պահանջի դեպքում, եթե Սպառողը չունի ԷՄԱ կանոններով պահանջվող տարածքի (շենքի, շինության) նկատմամբ իր իրավունքները հավաստող փաստաթուղթ՝ Սպառողին նախապես տեղեկացնելու պայմանով, բացառությամբ ԷՄԱ կանոններով նախատեսված դեպքերի,

դ. բնակիչ Սպառողի մահվան, իրավաբանական անձ Սպառողի լուծարման դեպքում,

ե. ԷՄՇ կանոնների համաձայն Որակավորված սպառողի կարգավիճակ ստանալու դեպքում,

զ օրենքով, ԷՄԱ կանոններով, սույն պայմանագրով և Հանձնաժողովի այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերում՝ Սպառողին նախապես տեղեկացնելու պայմանով:

28. Կողմերի համաձայնությամբ սույն պայմանագրում փոփոխություններ կարող են կատարվել գրավոր՝ պայմանով, որ չեն հակասի Հանձնաժողովի կողմից հաստատված և գործող օրինակելի ձևին և Հանձնաժողովի այլ իրավական ակտերին:

29. Սույն պայմանագրի փոփոխումը կամ դադարումը կողմերին չի ազատում մինչ այդ պայմանագրով ստանձնած և չկատարված պարտավորությունների կատարումից:

7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

30. Կողմերը պայմանագրային պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվություն են կրում օրենքով, ԷՄԱ կանոններով, ԷԲՑ կանոններով, ինչպես նաև սույն պայմանագրով սահմանված կարգով և դեպքերում:

31. Սույն պայմանագրով սահմանված ժամկետների խախտման դեպքում Սպառողն իրավունք ունի Բաշխողից պահանջել վճարելու տույժ՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար էլեկտրական ցանցին միացման վճարի 0,1 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան միացման վճարի ընդհանուր գումարը, իսկ ԷԲՑ կանոններով սահմանված դեպքերում՝ ԷԲՑ կանոններով սահմանված չափով և կարգով:

32. Միացման վճարի և կանխավճարի տարբերությունը վճարելու՝ սույն պայմանագրի 6-րդ կետում սահմանված ժամկետը խախտելու դեպքում Բաշխողն իրավունք ունի Սպառողից պահանջել վճարելու տույժ՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար՝ միացման վճարի և կանխավճարի տարբերության 0,1 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան միացման վճարի և կանխավճարի տարբերության չափը:

33. Բաշխողը սպասարկման որակի պահանջների խախտման դեպքում պարտավոր է ԷՄԱ կանոններով և ԷԲՑ կանոններով սահմանված կարգով Սպառողին վճարել տույժ:

34. Որակի ցուցանիշներից շեղումներով էլեկտրական էներգիա բաշխելու համար Բաշխողը փոխհատուցում է Սպառողի կրած վնասը օրենքով սահմանված կարգով:

35. Սպառողի (բացառությամբ բնակչության) կողմից սույն պայմանագրի համաձայն վճարման ժամկետը խախտելու դեպքում Բաշխողն իրավունք ունի Սպառողից պահանջել վճարելու տույժ՝ ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար չվճարված գումարի 0.1 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան չվճարված գումարի 10 տոկոսը: Տույժը կարող է հաշվարկվել Հաշվարկային ամսվան հաջորդող ամսի 20-ից, եթե դրանից առնվազն 7 օր առաջ ԷՄԱ կանոններով սահմանված կարգով տեղեկացրել է Սպառողին նրա կողմից սպառված էլեկտրական էներգիայի քանակի և արժեքի, իսկ Մատակարարի Սպառողի դեպքում՝ մատուցված բաշխման ծառայության քանակի և արժեքի մասին: Հակառակ դեպքում տույժը հաշվարկվում է ԷՄԱ կանոններով սահմանված կարգով տեղեկացնելուց ոչ շուտ, քան 7 օր հետո:

36.Առևտրային հաշվառքի սարքի շրջանցումով Սպառողի կողմից էլեկտրաէներգիա սպառելու դեպքում սպառված էլեկտրաէներգիայի քանակը որոշվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կարգով:

37. Կողմը պայմանագրային պարտավորությունների խախտման համար պատասխանատվություն չի կրում, եթե այն հետևանք է ֆորս մաժորի: Ֆորս մաժոր համարվող դեպքերը, ինչպես նաև դրանց կիրառման կարգը սահմանվում է ԷՄԱ կանոններով:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

38.Սույն պայմանագրում հասկացություններն ունեն «Էներգետիկայի մասին» օրենքով, ԷՄԱ և ԷԲՑ

կանոններով սահմանված նշանակությունը, եթե այլ բան ուղղակիորեն նախատեսված չէ սույն պայմանագրով:

39. Պայմանագրով Սպառողը համաձայնություն է տալիս ԷՄԱ և ԷԲՑ կանոնների համաձայն իր կողմից ներկայացված անձնական տվյալները հասանելի դարձնել այլ անձանց (այդ թվում՝ բանկերին, վճարահաշվարկային կազմակերպություններին)՝ ԷՄԱ կանոնների համաձայն մատակարարված (բաշխված) էլեկտրական էներգիայի դիմաց տեղեկությունը հասանելի դարձնելու, ինչպես նաև օրենքով և սույն պայմանագրի շրջանակում Բաշխողի կողմից ստանձնած պարտավորությունները կատարելու համար:

40.Կողմերի միջև առաջացող բոլոր վեճերը (տարաձայնությունները) կարգավորվում են բանակցությունների միջոցով:

41. Վեճը (տարաձայնությունը) կողմերի համաձայնությամբ չկարգավորվելու դեպքում կողմերից յուրաքանչյուրը կարող է դիմել Հանձնաժողով՝ վերջինիս իրավասությունների շրջանակում վիճարկվող հարցերը լուծելու խնդրանքով կամ վեճի լուծումը հանձնել իրավասու դատարան, եթե կողմերի համաձայնությամբ չի որոշվել գործը հանձնել արբիտրաժի լուծմանը:

42. Սույն պայմանագիրը կնքված է հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից, մեկական՝ յուրաքանչյուր կողմի համար:

9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ՄԱՍ ԿԱԶՄՈՂ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԻ ՑԱՆԿԸ

43. Սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող հավելվածներն են՝

1) Սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման վճարի հաշվարկի մասին N 1 հավելվածը.

2) Սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման տեխնիկական պայմանների մասին N 2 հավելվածը (ԷԲՑ կանոններով սահմանված բարդ ընթացակարգով էլեկտրական ցանցին միացման դեպքերում).

3) Սպառողի էլեկտրամատակարարման միագիծ սխեմայի մասին N 3 հավելվածը (ԷԲՑ կանոններով սահմանված բարդ ընթացակարգով էլեկտրական ցանցին միացման դեպքերում).

4) Սպառողի (ենթասպառողի) առևտրային (վերստուգիչ) հաշվառքի սարքի տվյալների մասին N 4 հավելվածը.

5) Սպառողի (ենթասպառողի) սնման ուղղության, լարման, առավելագույն թույլատրելի հզորության վերաբերյալ N 5 հավելվածը.

6) Բաշխողի էլեկտրական ցանցի և սպառողի սպառման համակարգի սահմանազատման կետի և էլեկտրատեղակայանքների շահագործման պատասխանատվության սահմանազատման վերաբերյալ N 6 հավելվածը.

7) տեխնոլոգիական և (կամ) վթարային հզորությունների վերաբերյալ N 7 հավելվածը.

8) 0,4 կվ և բարձր լարման սպառողների (բացառությամբ բնակչության) համար սահմանվող լրացուցիչ պայմանների մասին N 8 հավելվածը:

14. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Բաշխող՝

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԲԸ

Գտնվելու վայրը՝

ք.ԵՐԵՎԱՆ, Ա.ԱՐՄԵՆԱԿՅԱՆ 127

Հեռախոս

Էլ. փոստ office@ena.am

ՀՎՀՀ 01520882

Միացման վճարի հ/հ 2474690530183210

Սպառված էլեկտրաէներգիայի դիմաց վճարման հ/հ

Բանկ «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ

Գործունեության լիցենզիա N.....

ՌՈԲԵՐՏ ԼԵՎՈՆՅԱՆ

(ստորագրություն)

Կ.Տ.

Սպառող՝ <<ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ>> ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

Գտնվելու վայրը (բնակության վայրը)՝

ՀՀ ԵՐԵՎԱՆ , ք.ԵՐԵՎԱՆ, ՀԱԼԱԲՅԱՆ փող. 41Ա

Ծանուցման հասցեն՝ ՀՀ ԵՐԵՎԱՆ , ք.ԵՐԵՎԱՆ, ՀԱԼԱԲՅԱՆ փող. 41Ա

Էլ. փոստ

Հեռախոս 37477 101011

ՀՎՀՀ (իրավաբանական անձի դեպքում) 01223338

Բանկ

Հ/հ

ԳԼԽ. ՔԱՐ. ՊԱՇՏՈՆԱԿ Ա. ԱՎԱԳՅԱՆ

(ստորագրություն)